ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՄԱՐ. 15:25

25 Երրորդ ժամն էր, երբ նրան խաչեցին:

33 Վեցերորդ ժամին ամբողջ երկրի վրա խավարը տիրեց մինչև իններորդ ժամը: 34 Իններորդ ժամին Հիսուսը բարձրաձայն աղաղակեց ու ասաց. «Էլի՛, Էլի՛, լամա սաբաքթանի», որ թարգմանվում է՝ «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ» (Սաղ. 22.1):

- ***Հիսուսը Երուսաղեմ եկավ Զատիկի շաբաթը՝ գառների ընտրության օրը:***

  - *Համաձայն Ելից 12:3-ի՝ յուրաքանչյուր մարդ իր ընտանիքի համար մի գառ պետք է ընտրեր առաջին ամսվա (Նիսանի) տասներորդ օրը:Գառնուկը պետք է լիներ մեկ տարեկան արու, առանց արատների: Ընտանիքն այնուհետև պահում էր գառը մինչև տասնչորսերորդ օրը (Ելից 12.6), իսկ հետո մորթում էր գառը այդ երեկո Զատիկի ընթրիքի համար:*

  - *Հիսուսի օրոք արձանագրված է, որ միայն անհատների և ընտանիքների կողմից մեկ Պասեքի ժամանակ զոհաբերվել է 255,600 Զատկի գառ:*

37 Եւ Յիսուսը մեծ ձայն արձակեց՝ եւ Հոգին ավանդեց: 38 Եվ տաճարի վարագույրը վերևից ներքև երկու մասի պատռվեց:

Սրբության Սրբոցի առջևի վարագույրները ունեին 18 մետր երկարություն և 9 մետր լայնություն, որոնցից յուրաքանչյուրը ձեռքի ափի հաստությունն էր: Դրանք այնքան ծանր էին, որ երեք հարյուր քահանա էր պետք՝ վարագույրը ամրացնելու համար: (Հրեա պատմաբան Josephus-ի գրվածքներից)

1. ՀԻՍՈՒՍԸ ԽԱՉՎԵՑ ԶԱՏԻԿԻ ԺԱՄԱՆԱԿ, ԵՐԲ ՊԵՏՔ Է ԶՈՀԱԲԵՐՎԵՐ ԶԱՏԿԻ ԳԱՌԸ:

Հովհաննես 1:29 – Հաջորդ օրը Հովհաննեսը տեսավ Հիսուսին, որ գալիս էր իր մոտ, ու ասաց. Ահա Աստծու Գառը, որ իր վրա է վերցնում աշխարհի մեղքը:

- *Ծննդոցից (Ծննդոց 22:8 – «Աստված կհոգա իր ողջակեզի գառան մասին»), մինչև Հայտնություն (Հայտնություն 5:12 – «Արժանի է մորթված Գառը»), Քրիստոսը մեր Զատկի Գառն է: Եվ համոզվելու համար, որ մենք դա հասկանում ենք, Աստված Իր Որդուն ուղարկեց Երուսաղեմ հենց այն օրը, երբ հրեա ժողովուրդն ընտրում էր իր գառը վերջին 1500 տարիների ընթացքում:*

- *Հետո Սողոմոնն սկսեց կառուցել Տիրոջ տունը Երուսաղեմում՝ Մորիա լեռան վրա, ուր Տերը երևացել էր նրա հորը՝ Դավթին, այն տեղում, որ Դավիթը պատրաստել էր հեբուսացի Ոռնայի կալում (Բ Մնացորդաց 3:1):*

2. ՄԵՐ ԶԱՏԻԿԸ՝ ՔՐԻՍՏՈՍԸ, ՄԵԶ ՃԱՆԱՊԱՐՀ ԲԱՑԵՑ ՎԱՐԱԳՈՒՅՐԻ ՄԻՋՈՎ:

1 Կոր. 5:7 - ...որովհետեւ մեր զատիկը մորթուեցաւ մեզ համար՝ Քրիստոսը:

Եբր. 10:19-21 - 19 Արդ, եղբայրնե՛ր, քանի որ համարձակություն ունենք մուտք գործելու սրբարան Հիսուսի արյամբ, 20 Որն մեզ համար նոր ու կենդանի ճանապարհ բացեց վարագույրի միջով, որ իր մարմինն է, 21 և մի մեծ քահանա ունենք Աստծու տան վրա.

Եբրայեցիս 9:28 – նույնպես էլ Քրիստոսը շատերի մեղքերը վերցնելու համար մեկ անգամ զոհաբերվեց, իսկ երկրորդ անգամ կհայտնվի առանց մեղքի՝ իրեն սպասողների փրկության համար:

Ա Պետրոս 1:18-19 – իմանալով, որ ձեր հայրենավանդ ունայն կյանքից ոչ թե արծաթով կամ ոսկով փրկվեցիք, այլ Քրիստոսի պատվական արյունով՝ իբրև անբիծ ու անարատ գառան:

3. ՄԵՐ ԶԱՏԻԿԸ՝ ՔՐԻՍՏՈՍԸ, ՄԵԶ ՀԱՄԱՐ ՄՈՐԹՎԵՑ (Ա ԿՈՐ. 5:7):

- *Հայտնության գրքում քսանից ավելի անգամներ Քրիստոսը հիշատակվում է որպես Գառ:*

  Հայտնություն 5:6 – Տեսա, որ գահի, չորս կենդանիների և երեցների մեջտեղում ասես մորթված մի Գառ կար...

  Հայտնություն 5:12 – Նրանք բարձրաձայն ասում էին. Մորթված Գառն արժանի է ընդունելու զորություն, հարստություն, իմաստություն, ուժ, պատիվ, փառք և օրհնություն:

  Հայտնություն 12:11 – Եվ նրանք հաղթեցին նրան Գառան արյունով ու իրենց վկայության խոսքով և իրենց կյանքը չսիրեցին մինչև մահ:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ